

Խոշտանգումների և անմարդկային
կամ արժանապատվությունը նվաստացնող
վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման
Եվրոպական կոմիտե (ԽԿԿ)

ԿԿԽ/Inf (2020)13

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Ազատագրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները՝ Կորոնավիրուսի (COVID-19) համավարակի համատեքստում

Մարտի 20, 2020թ.

Կորոնավիրուսի (COVID-19) համավարակը արտակարգ մարտահրավերներ է առաջացրել Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ պետությունների իշխանությունների համար: Այս մարտահրավերներն ունեն հատուկ և ինտենսիվ բնույթ ազատագրկման տարբեր վայրերում, մասնավորապես՝ ոստիկանության կալանավայրերում, քրեակատարողական հաստատություններում, միգրանտների պահման կենտրոններում, հոգեբուժական հիվանդանոցներում և սոցիալական խնամքի տներում, ինչպես նաև կարանտինում պահվող մարդկանց համար նոր հիմնված հաստատություններում/գոտիներում աշխատող անձնակազմի համար: Հաշվի առնելով COVID-19-ի դեմ պայքարելու համար ուժեղ միջոցառումներ ձեռնարկելու պարտավորությունը՝ ԽԿԿ-ն պետք է հիշեցնի բոլոր դերակատարներին՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքի բացարձակ բնույթի մասին: Պաշտպանության միջոցները երբեք չպետք է հանգեցնեն ազատագրկված անձանց հանդեպ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի: ԽԿԿ-ի տեսանկյունից՝ հետևյալ սկզբունքները պետք է կիրառվեն այն բոլոր համապատասխան մարմինների կողմից, որոնք պատասխանատու են ազատագրկված անձանց համար Եվրոպայի Խորհրդի տարածքում:

1) Հիմնարար սկզբունքը պետք է լինի բոլոր հնարավոր գործողությունների ձեռնարկումը՝ պաշտպանելու ազատագրկված անձանց առողջությունն ու անվտանգությունը: Նման գործողությունների ձեռնարկումը նաև նպաստում է անձնակազմի առողջության ու անվտանգության պահպանմանը:

2) Ազատագրկման բոլոր վայրերում պետք է հաշվի առնվեն և լիովին իրականացվեն ԱՀԿ-ի՝ համավարակի դեմ պայքարելու վերաբերյալ ուղեցույցները, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան՝ ազգային առողջապահական և կլինիկական ուղեցույցները:

3) Անհրաժեշտ է ապահովել անձնակազմի հասանելիությունը, և անձնակազմը պետք է ստանա այն մասնագիտական աջակցությունը, առողջապահական և անվտանգության պահպանման միջոցները, ինչպես նաև վերապատրաստումը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի նրանք շարունակեն կատարել իրենց առաջադրանքները ազատագրկման վայրերում:

4) COVID-19-ի տարածումը կանխելու նպատակով ազատագրկված անձանց հանդեպ կիրառվող ցանկացած սահմանափակող միջոց պետք է ունենա իրավական հիմք և լինի անհրաժեշտ ու համաչափ, ինչպես նաև հիմնված մարդու արժանապատվության հանդեպ հարգանքի վրա և ունենա ժամանակային սահմանափակում: Այս բոլոր միջոցների մասին ազատագրկված անձինք պետք է ստանան համապարփակ տեղեկություն՝ իրենց հասկանալի լեզվով:

5) Քանի որ մոտիկ անձնային կոնտակտը նպաստում է վիրուսի տարածմանը, համապատասխան բոլոր մարմինները պետք է գործադրեն հստակ ջանքեր՝ անցնելու ազատագրկման այլընտրանքային տարբերակների: Նման մոտեցման անհրաժեշտությունը առաջնային է հատկապես ազատագրկման վայրերի գերբնակեցման պայմաններում: Դրանից բացի՝ իշխանությունները ավելի շատ պետք է օգտվեն մինչդատական կալանքի այլընտրանքներից, պատժի ժամանակահատվածի կրճատումից, վաղաժամ ազատումից և պրոբացիայից: Նրանք պետք է նաև վերագնահատեն հոգեբուժական հաստատություններում անձանց ոչ կամավոր տեղափոխման անհրաժեշտությունը և դիտարկեն այդ անձանց՝ դուրս գրվելու կամ համայնքային խնամքին, իսկ հնարավորության դեպքում՝ սոցիալական խնամքի տներին հանձնվելու հնարավորությունը, և, որքան հնարավոր է, խուսափեն միգրանտներին կալանավորելուց:

6) Առողջապահական խնամքի առումով անհրաժեշտ կլինի հատուկ ուշադրություն դարձնել ազատագրկված անձանց հատուկ կարիքներին, հատկապես խոցելի և/կամ ռիսկային խմբերին, մասնավորապես՝ տարեց անձանց և արդեն իսկ որևէ հիվանդություն ունեցող անձանց: Սա ընդգրկում է, ի թիվս այլոց, COVID-19-ի առկայությունը ստուգելու համար կատարվող սկրինինգ և ինտենսիվ խնամքի ապահովում՝ ըստ անհրաժեշտության: Բացի այդ, այս ժամանակահատվածում անձնակազմը պետք է կալանավորված անձանց տրամադրի հոգեբանական աջակցություն:

7) Թեև ոչ էական գործողությունների կասեցումը արդարացված և ողջամիտ է, համավարակի ժամանակ անհրաժեշտ է լիարժեք հարգանք ցուցաբերել ազատագրկված անձանց հիմնարար իրավունքների նկատմամբ: Մասնավորապես, սրա մեջ մտնում է բավարար անձնական հիգիենա պահպանելու իրավունքը (այդ թվում՝ տաք ջրի և օձառի հասանելիությունը) և ամեն օր բացօթյա տարածքում գտնվելու իրավունքը (առնվազն մեկ ժամ): Ավելին՝ արտաքին աշխարհի հետ կոնտակտի, այդ թվում՝ այցելությունների ցանկացած սահմանափակման փոխարեն, ազատագրկված անձինք պետք է ունենան այլընտրանքային հաղորդակցման

միջոցների ավելի մեծ հասանելիություն (օրինակ՝ հեռախոս կամ ձայնային հաղորդակցություն ինտերնետի միջոցով):

8) Եթե մեկուսացվում կամ կարանտինի պահպանման վայր է տեղափոխվում ազատագրված անձը, ում՝ SARS-CoV-2 վիրուսով վարակված լինելը հաստատված է կամ հնարավոր, անհրաժեշտ է ապահովել, որ այդ անձն ամեն օր ունենա իմաստալից մարդկային շփում այլ մարդկանց հետ:

9) Իրավապահ մարմինների կալանքի տակ գտնվող անձանց վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիքները (փաստաբանի հասանելիություն, բժշկի հասանելիություն, կալանքի մասին ծանուցում) պետք է պահպանվեն բոլոր պայմաններում և մշտապես: Որոշ հանգամանքներում նախազգուշական միջոցառումները (օրինակ՝ պահանջ, որ ախտանշան ունեցող անձինք կրեն պաշտպանիչ դիմակ) կարող են լինել արդարացված:

10) Անկախ մարմինների կողմից, այդ թվում՝ Ազգային կանխարգելիչ մեխանիզմների և ԽԿԿ-ի կողմից մշտադիտարկումը կարևոր երաշխիք է վատ վերաբերմունքի դեմ: Պետությունները պետք է շարունակեն մշտադիտարկող մարմինների համար երաշխավորել հասանելիություն բոլոր կալանավայրերին, այդ թվում՝ այն վայրերին, որտեղ մարդիկ գտնվում են կարանտինում: Այնուամենայնիվ, բոլոր մշտադիտարկող մարմինները պետք է ձեռնարկեն նախազգուշական միջոցներ՝ հետևելու «չվնասել» սկզբունքին, հատկապես, երբ գործ ունեն տարեց անձանց և ուղեկցող հիվանդություն ունեցող անձանց հետ:

Թարգմանությունը՝ ՀՔԱՎ-ի